ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/3.1-2-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. ապրիլի 10-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվակա+նի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Պետրոսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

2024 թվականի մարտի 11-ին կայացած Հանձնաժողովի նիստի **2/3.1-2-24** արձանագրությամբ ամրագրվել է, որ հաշվի առնելով հայտարարված դրամաշնորհային մրցույթի սահմանափակ ֆինանսական միջոցները (մրցույթի շրջանակում պետական բյուջեից հատկացվելիք գումարը 60.360.000 ՀՀ դրամ է (ներառյալ ԱԱՀ) (50.300.000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)), առկա բյուջեն բաշխելու նպատակով առաջացել է անհրաժեշտություն **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված 7 հայտերը ներկայացրած կազմակերպություններին առաջարկել փոխել (նվազեցնել) իրենց կողմից հայտին կից ներկայացված ֆինանսական նախահաշիվները:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման համար հաղթող են ճանաչվել հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 7 (յոթ) կազմակերպություն՝

- «Նումա» ՍՊԸ-ն՝ «Գարեջրի օրեր» փառատոնի կազմակերպման համար,
- ««Արենի» Փառատոն» Հիմնադրամը՝ «Արենի» գինու փառատոնի կազմակերպման համար,
- «ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ն՝ «Արվեստների և արհեստների» համահայկական փառատոնի կազմակերպման համար,
- «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ը՝ «Արմենիա» միջազգային ութերորդ երաժշտական փառատոնի կազմակերպման համար,
- «Տուրիզմի հայկական ֆեդերացիա» ՀԿ-ն՝ «Նավասարդ» հայ-իրանական մշակութային խոհանոցային փառատոնի կազմակերպման համար,
- «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» ՀԿ-ն՝ «Միմինո» խորագրով հայ-վրացական մշակութային խոհանոցային փառատոնի կազմակերպման համար,
- «Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ»-ը՝ «Վարդավառ» փառատոնի կազմակերպման համար:

2. Փառատոներին աջակցության չափաբաժինները սահմանելիս պետք է հաշվի առնել մի շարք գործոններ, մասնավորապես՝

- նախորդ տարիներին Զբոսաշրջության կոմիտեից ստացած աջակցությունը և դրա չափաբաժինը (առաջարկները նվազեցվել են նախորդ տարիներին ստացված աջակցության չափաբաժիններից),
- նախորդ տարիներին Զբոսաշրջության կոմիտեից ստացած աջակցության շրջանակներում ծրագրի կայացման արդյունքները,
- բովանդակային առումով աշխարհագրական ուղղվածությունն ու ընդգրկվածությունը (միջազգային, տարածաշրջանային, մարզային, քաղաքային),

• հնարավորությունը՝ Հայաստանին բնորոշ ազգային, ծիսակարգային ավանդույթները նորովի կազմակերպելու, ներկայացնելու և տարածելու,

• հավանականությունը, որ փառատոնը կդառնա երկրի բրենդային փառատոներից մեկը (ինչպես օրինակ՝ Իսպանիայում «Տոմատոֆեստը», Հնդկաստանում «Հոլլին», Իտալիայում «Մենամարտ նարինջներով» և այլն),

• փառատոնի մարքեթինգային ուղղվածությունը,

• թիրախ հանդիսացող զբոսաշրջիկները՝ ներգնա, ներքին,

• համաֆինանսավորման այլ աղբյուրների առկայությունը,

• համայնքային զարգացմանը և ՓՄՁ-ների ակտիվացմանը նպաստելու գործոնը:

3. Հաղթող կազմակերպություններին առաջարկվում է վերանայել իրենց ֆինանսական նախահաշիվները հետևյալ գումարների սահմաններում՝

Մասնավորապես՝

• ***«Նումա» ՍՊԸ***-ի կողմից «**Գարեջրի օրեր**» փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 8.520.000 (ութ միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (այդ թվում՝ 1.420.000 (մեկ միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ ԱԱՀ) գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 3.600.000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ (այդ թվում՝ 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ԱԱՀ) գումարի չափով:

Փառատոնի առավելություններն են՝

➢ անկախ մրցույթի արդյունքներից (հայտերը բացվել են փետրվարի 9-ին) կազմակերպությունն իր սեփական նախաձեռնությամբ դեռ հունվարի 12-ից սկսել է փառատանի գովազդային արշավը, կարելի է եզրակացնել, որ անկախ մրցույթի արդյունքներից և դրամական աջակցության չափից կազմակերպությունը գնահատել է փառատոնի իրականացման բոլոր ֆինանսական ռիսկերը, անգամ մրցույթում հաղթող չճանաչվելու հավանականությունը,

➢ ներկայացրել է տեղեկատվություն սեփական ներդրումների մասին,

➢ ուղղված է հայկական գարեջրի պատմության ներկայացմանը, (ուշագրավ է, որ վերջին շրջանում Հայաստանը համաշխարհային զբոսաշրջային շուկայում Գաստրո ուղղության մեջ ներկայանում է գինու զբոսաշրջությամբ, և զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգային ծրագրերում ավելի արդարացված է համեմատաբար ֆինանսական մեծ ներդրումներ իրականացնել գինու մշակույթը ներկայացնող միջոցառումներին),

➢ կրում է կոմերցիոն բնույթ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նպատակահարմար է **«Գարեջրի օրեր»** փառատոնի կազմակերպման համար տրամադրել 3,600,000 ՀՀ դրամի աջակցություն:

• ***««Արենի» փառատոն» Հիմնադրամի*** կողմից **«Արենի» գինու** փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 12.947.000 (տասներկու միլիոն ինը հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով,

2023 թվականին, «Արենի» գինու փառատոնի կազմակերպման նպատակով ««Արենի» փառատոն» հիմնադրամը Զբոսաշրջության կոմիտեի հետ կնքել է 9.994.000 (ինը միլիոն ինը հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամի չափով «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագիր, որը լուծվել է և փառատոնը չի իրականացել (հիմքը՝ ՀՀ ՊՆ, ԱԱԾ գրությունները տվյալ

ժամանակահատվածում փառատոնի կազմակերպման աննպատակահարմարության վերաբերյալ): Հիմնադրամը հանձնման-ընդունման ԱԿՏ-ի հիմքով ԶԿ-ին է հանձնել նախապես ձեռք բերած ապրանքները, որի դիմաց ստացել է 867.000 ՀՀ դրամ փոխհատուցում:

Փառատոնի առավելություններն են՝

➢փառատոնը նպաստում է համայնքային զարգացմանը,

➢հնարավություն է տալիս Արենի համայնքի և հարակից գյուղերի գինեգործներին, մասնավորապես տնական գինի արտադրողներին ներկայացնել իրենց արտադրանքը,

➢բովանդակային առումով նպաստում է գյուղական և գինու զբոսաշրջության զարգացմանը,

➢կազմակերպության մեկնաբանության համաձայն առկա են համաֆինանսավորման ավելի մեծ բյուջե, որպեսզի երկար դադարից հետո այս տարի ավելի լավ ներկայանան,

➢սիրված է Հայաստանում և երկրի սահմաններից դուրս:

Փառատոնը վերջին 2 տարիներին չի իրականացվել, ուստի, առկա է նաև 2024 թվականի չիրականացման ռիսկը (հաշվի առնելով փառատոնի անցկացման վայրը), սակայն, պետք է ընդունել նաև, որ 2 տարվա ընդմիջումից փառատոնը պետք է կազմակերպվի ըստ պատշաճի: Փառատոնը հիմնականում ընդգրկվում է զբոսաշրջային օպերատորների կողմից մշակվող զբոսաշրջային փաթեթներում:

Համայնքներին խրախուսելու, գյուղական և գինու զբոսաշրջության զարգացմանը նպաստելու, տեղական արտադրողների համար հնարավորությունները չսահմանափակելու նպատակով նպատակահարմար է, հիմնադրամին **«Արենի» գինու** փառատոնի կազմակերպման համար տրամադրել պետական աջակցություն 5,000,000 ՀՀ դրամի չափով:

• ***«ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ***-ի կողմից **«Դիլիջանի արհեստների և արվեստների»** փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 6.034.000 (վեց միլիոն երեսունչորս հազար) ՀՀ դրամ գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով,

«Մեդիա Օնիքս» ՀԿ-ն 2023 թվականին մասնակցել է «Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը» դրամաշնորհային մրցույթին, արդյունքում **«Դիլիջանի արհեստների և արվեստների»** փառատոնի կազմակերպման համար շնորհվել է 3,000,000 ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն, որի շրջանակներում ծրագիրն ամբողջությամբ իրականացել է:

Փառատոնի առավելություններն են՝

➢ փառատոնը ներքին զբոսաշրջիկների շրջանում հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող, տարածող գործոններից մեկն է,

➢ փառատոնի կազմակերպումը մեծապես նպաստում է համայնքների զարգացմանն ու ակտիվացմանը,

➢ թիրախային շուկա՝ ներքին զբոսաշրջիկներ:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ նախորդ տարվա 3,000,000 ՀՀ դրամի աջակցության արդյունքը համարվել է բավարար, **«Դիլիջանի արհեստների և**

արվեստների» փառատոնի կազմակերպման համար նպատակահարմար է նվազեցնել փառատոնի աջակցությունը մինչև 3,000,000 ՀՀ դրամ:

• ***«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ***-ի կողմից **«Արմենիա» միջազգային երաժշտական** փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 25.002.000 (քսանհինգ միլիոն երկու հազար) ՀՀ դրամ (այդ թվում՝ 4.167.000 (չորս միլիոն հարյուր վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ ԱԱՀ) գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 18.000.000 (տասնութ միլիոն) ՀՀ դրամ (այդ թվում՝ 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ ԱԱՀ) գումարի չափով

«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ»-ը 2023 թվականին մասնակցել է «Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը» դրամաշնորհային մրցույթին, որի արդյունքում **«Արմենիա» միջազգային երաժշտական** փառատոնի կազմակերպման համար շնորհվել է 25.000.000 ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն (ներառյալ ԱԱՀ), որի շրջանակներում ծրագիրն ամբողջությամբ իրականացել է:

Սույն ծրագրային առաջարկի առավելություններն են.

- աշխարհագրական ուղղվածությունն ու ընդգրկվածությունը՝ միջազգային,
- համերգների քանակը՝ 5 (1 ամսվա ընթացքում),
- մասնակիցներ և հատուկ հրավիրված հյուրեր՝ միջազգային հեղինակություն ունեցող արտիստների մասնակցություն,
- մարքեթինգային ուղղվածություն Հայաստանի սահմաններից դուրս՝ համագործակցություն արտասահմանյան լրատվամիջոցների հետ, որը կնպաստի միջազգային հարթակներում Հայաստանի՝ որպես զբոսաշրջային երկրի ճանաչելիության բարձրացմանը,
- առաջին անգամ Festival Finder հարթակում ներկայության ապահովում, մշակութային ուղղվածության զբոսաշրջիկներին ներգրավելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ փառատոնի կազմակերպման համար նախորդ տարվա 25.000.000 ՀՀ դրամի աջակցության արդյունքը համարվել է բավարար՝ ներկայացնելով Հայաստանը՝ որպես մշակութային զբոսաշրջության համար գրավիչ երկիր՝ նպատակահարմար է նվազեցնել ֆինանսական աջակցությունը մինչև 18.000.000 դրամ:

• ***«Տուրիզմի հայկական ֆեդերացիա» ՀԿ***-ի կողմից **«Նավասարդ» հայ-իրանական խոհանոցային-մշակութային** փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 19.980.000 (տասնինը միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:

«Տուրիզմի հայկական ֆեդերացիա» ՀԿ-ն 2023 թվականին մասնակցել է «Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը» դրամաշնորհային մրցույթին, արդյունքում **«Նավասարդ» հայ-իրանական խոհանոցային-մշակութային** փառատոնի կազմակերպման համար շնորհվել է 10.000.000 ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն, որի շրջանակներում ծրագիրն ամբողջությամբ իրականացել է:

Փառատոնի առավելություններն են՝

- տարածաշրջանային, երկկողմ համագործակցության (հայ-իրանական) ակտիվացում,
- հավանական է, որ փառատոնը կդառնա հայկական և իրանական մշակույթը ներկայացնող, տարածող գործոններից մեկը,
- հնարավորություն կունենա ընդգրկվել տարածաշրջանային զբոսաշրջային փաթեթներում,
- փառատոնի հաջորդ օրը Երևանում նախատեսված է գիտաժողովի կազմակերպում, որի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, կքննարկվեն Հայաստանի և Իրանի միջև զբոսաշրջային այցելությունների առավել ակտիվացմանը, հայ-իրանական միասնական զբոսաշրջային արդյունք ստեղծելուն առնչվող հարցեր,
- փառատոնի կազմակերպումը մեծապես նպաստում է համայնքի զարգացմանն ու ակտիվացմանը,
- թիրախային շուկա՝ ներքին զբոսաշրջիկներ և Իրանից ներգնա զբոսաշրջիկներ:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ նախորդ տարվա 10.000.000 ՀՀ դրամի աջակցության արդյունքը համարվել է բավարար, իսկ այս տարի **«Նավասարդ» հայ-իրանական խոհանոցային-մշակութային** փառատոնի կազմակերպման համար առկա է նաև համաֆինանսավորում այլ աղբյուրներից (այդ թվում՝ Զբոսաշրջության կոմիտեի և «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի միջև 2024 թվականի փետրվարի 27-ին կնքված N74-24 պայմանագրի հիման վրա)՝ նպատակահարմար է նվազեցնել փառատոնի աջակցությունը մինչև 5.000.000 ՀՀ դրամ:

- ***«Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» ՀԿ***-ի կողմից **«Միմինո» խորագրով հայ-վրացական խոհանոցային-մշակութային** փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 15.805.000 (տասնհինգ միլիոն ութ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:

«Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» ՀԿ-ն 2023 թվականին մասնակցել է «Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը» դրամաշնորհային մրցույթին՝ արդյունքում **«Միմինո» խորագրով հայ-վրացական խոհանոցային-մշակութային** փառատոնի կազմակերպման համար շնորհվել է 10.000.000 ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն, որի շրջանակներում ծրագիրն ամբողջության իրականացել է:

Փառատոնի առավելություններն են՝

- տարածաշրջանային, երկկողմ համագործակցության (հայ-վրացական) ակտիվացում,
- հավանական է, որ փառատոնը կդառնա հայկական և վրացական մշակույթը ներկայացնող, տարածող գործոններից մեկը,
- հնարավորություն կունենա ընդգրկվել տարածաշրջանային զբոսաշրջային փաթեթներում,

➢ թիրախային շուկա՝ ներքին զբոսաշրջիկներ և Վրաստանից ներգնա զբոսաշրջիկներ:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ նախորդ տարվա 10.000.000 ՀՀ դրամի աջակցության արդյունքը համարվել է բավարար, իսկ այս տարի **«Միմինո» խորագրով հայ-վրացական խոհանոցային-մշակութային** փառատոնի կազմակերպման համար առկա է նաև համաֆինանսավորում այլ աղբյուրներից՝ նպատակահարմար է նվազեցնել փառատոնի աջակցությունը մինչև 5.000.000 ՀՀ դրամ:

- **«Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ»**-ի կողմից **«Վարդավառ»** փառատոնի կազմակերպաման համար նախահաշվով ներկայացված 20.079.700 (քսան միլիոն յոթանասունինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 14.000.000 (տասնչորս միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:

«Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ»-ը Հայաստանում ներառական զբոսաշրջության զարգացման նպատակով 2023 թվականին Զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ ստեղծել է Հայաստանում իր տեսակով առաջին վիրտուալ տուրը, որը ստացավ դրական արձագանք:

Սույն ծրագրային առաջարկի առավելություններն են.

- վարդավառի տոնածիսական առանձնահատկությունների ինքնատիպ ներկայացումը, ազգային-ավանդական մշակույթի հանրայնացումը և երկրի սահմաններից դուրս Վարդավառը բրենդային փառատոն դարձնելու հեռանկարները,
- հայ հասարակության մեծ ուշադրությունը տոնին,
- Հայաստան այցելող զբոսաշրջիկների կողմից ամեն տարի աճող հետաքրքրությունը տոնի և նրա խորհրդի նկատմամբ,
- փառատոնի կարևորությունը ավելի բարձրացվեց, երբ համաշխարհային Disney Chanel-ն առաջին անգամ անդրադարձավ հայկական Վարդավառ տոնին:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև գնահատելով և մեծապես կարևորելով փառատոնի բովանդակությունը, դիտարկելով համաֆինանսավորման այլ աղբյուրների բացակայության փաստը՝ նպատակահարմար է նվազեցնել փառատոնի աջակցությունը մինչև 14.000.000 ՀՀ դրամ:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման համար հաղթող ճանաչված 7 (յոթ) կազմակերպություններին առաջարկվում է վերանայել իրենց ֆինանսական նախահաշիվները և 10-օրյա ժամկետում ներկայացնել նախահաշվային փաստաթղթերի վերախմբագրված տարբերակ՝

Մասնավորապես՝

• **«Նումա» ՍՊԸ**-ի կողմից **«Գարեջրի օրեր»** փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 8.520.000 (ութ միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (այդ թվում՝ 1.420.000 (մեկ միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ ԱԱՀ) գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 3.600.000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ (այդ թվում՝ 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ԱԱՀ) գումարի չափով:

• **««Արենի» Փառատոն» Հիմնադրամի** կողմից **«Արենի» գինու** փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 12.947.000 (տասներկու միլիոն ինը հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով,

• **«ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ**-ի կողմից **«Դիլիջանի արհեստների և արվեստների»** փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 6.034.000 (վեց միլիոն երեսունչորս հազար) ՀՀ դրամ գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով,

• **«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ**-ի կողմից **«Արմենիա» միջազգային երաժշտական** փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 25.002.000 (քսանհինգ միլիոն երկու հազար) ՀՀ դրամ (այդ թվում՝ 4.167.000 (չորս միլիոն հարյուր վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ ԱԱՀ) գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 18.000.000 (տասնութ միլիոն) ՀՀ դրամ (այդ թվում՝ 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ ԱԱՀ) գումարի չափով:

• **«Տուրիզմի հայկական ֆեդերացիա» ՀԿ**-ի կողմից **«Նավասարդ» հայ-իրանական խոհանոցային-մշակութային** փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 19.980.000 (տասնինը միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:

• **«Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» ՀԿ**-ի կողմից **«Միմինո» խորագրով հայ-վրացական խոհանոցային-մշակութային** փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 15.805.000 (տասնհինգ միլիոն ութ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:

• «**Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ**»-ի կողմից **««Վարդավառ»-ի փառատոն»**-ի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 20.079.700 (քսան միլիոն յոթանասունինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 14.000.000 (տասնչորս միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:

2. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագրեր Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման համար հաղթող ճանաչված՝

• «Նումա» ՍՊԸ-ի հետ՝ «Գարեջրի օրեր» փառատոնի կազմակերպման համար,

• ««Արենի» Փառատոն» Հիմնադրամի հետ՝ «Արենի» գինու փառատոնի կազմակերպման համար,

• «ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ի հետ՝ «Արվեստների և արհեստների» համահայկական փառատոնի կազմակերպման համար,

• «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի հետ՝ «Արմենիա» միջազգային ութերորդ երաժշտական փառատոնի կազմակերպման համար,

• «Տուրիզմի հայկական ֆեդերացիա» ՀԿ-ի հետ՝ «Նավասարդ» հայ-իրանական մշակութային խոհանոցային փառատոնի կազմակերպման համար,

• «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» ՀԿ-ի հետ՝ «Միմինո» խորագրով հայ-վրացական մշակութային խոհանոցային փառատոնի կազմակերպման համար,

• «Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ»-ի հետ՝ «Վարդավառ» փառատոնի կազմակերպման համար

նախահաշվային փաստաթղթերի վերախմբագրված տարբերակը ներկայացնելու դեպքում:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել Զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Ա.Սողբաթյան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Պետրոսյան - _____

Շ.Հովսեփյան - _____